ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2026 թվականի N 118 - Ա

ՆԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԱԶՆԻՎ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՐՆԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՍՈՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, 2026 թվականի մարտի 13-ի հարցազրույցի N 652 արձանագրությունը և Ն. Գրիգորյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2026 թվականի մարտի 26-ից Նարա Գրիգորյանին նշանակել «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով:
2. Սոնա Մկրտչյանին 2026 թվականի մարտի 26-ից ազատել «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականու-թյունների կատարումից:
3. Նարա Գրիգորյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գյուլնարա Ջհանգիրյանին:

2026-03-25 17:53:23 GMT+4
Հավաստված ԵԷԿԵՆԳ-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026 թվականի մարտի 25